Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 15-06-2020 թ. որոշմամբ
«ՖԻՆԱՆՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՖԻՆԱՆՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Վ.Սարգսյան 6
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01020
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2008-10-07
1.5 ՀՎՀՀ-ն		02706031
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)77393162
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.fsm.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@fsm.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ՀՀ կենտրոնական բանկ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Փիրուզ Սարգսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	46	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և հայմայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	<<Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին>> ՀՀ օրենք	822578000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	200000	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
<<Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին>> ՀՀ օրենք	611009000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	611009000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	611009000	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 3 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի ղեկավար

2020թ. մարտի 10

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	252,940	43,838
Ոչ նյութական ակտիվներ	5	22,024	20,247
		274,964	64,085
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	4,576	6,288
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	7	3,448	3,900
Կարճաժամկետ պետական պարտատոմսեր	8	76,177	-
Մնացորդներ բանկերում		471,107	388,111
		555,308	398,299
Ընդամենը ակտիվներ		830,272	462,384
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	9	158,288	-
		158,288	-
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	10	64,956	61,715
Վարձակալության գծով պարտավորություն	9	51,157	-
Շահութահարկի գծով պարտավորություն		1,633	-
		117,746	61,715
Զուտ ակտիվներ			
Պահուստային կապիտալ		330,669	245,427
Կուտակված արդյունք		223,569	155,242
		554,238	400,669
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		830,272	462,384

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. մարտի 10-ին:

Փիրուզ Սարգսյան
Հիմնադրամի կառավարիչ

Գոհար Միրզախանյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայաց-ված)
Եկամուտ			
Գործառնական եկամուտ	11	823,252	717,710
Ֆինանսական հաստատություններին վերադարձված գումարներ	22	(70,000)	(70,000)
		753,252	647,710
Ծախսեր			
Հատուցումներ աշխատակիցներին	13	(284,746)	(272,508)
Կրթական ծրագրերի ծախսեր		(29,003)	(27,261)
Գովազդի և մարքեթինգի ծախսեր		(41,422)	(40,596)
Կոնֆերանսի կազմակերպման ծախսեր		(15,416)	(18,737)
Վարձակալություն		(344)	(64,767)
Գործուղման և վերապատրաստման ծախսեր		(29,933)	(35,468)
Ներկայացուցչական ծախսեր		(13,399)	(13,383)
Մաշվածություն		(66,731)	(15,136)
Ամորտիզացիա		(3,733)	(3,141)
Աուդիտ և խորհրդատվություն		(54,062)	(37,716)
Գրասենյակային ծախսեր	12	(34,463)	(25,060)
Այլ ծախսեր		(11,562)	(12,410)
Գործառնական արդյունք		168,438	81,527
Ֆինանսական եկամուտ	14	11,307	4,647
Ֆինանսական ծախս	14	(23,935)	-
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)		20	(3)
Արդյունք մինչև հարկերը		155,830	86,171
Շահութահարկի գծով ծախս	15	(2,261)	(929)
Տարվա արդյունք		153,569	85,242

Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Պահուստային կապիտալ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	134,410	181,017	315,427
Տարվա արդյունք	-	85,242	85,242
Հատկացումներ պահուստին	111,017	(111,017)	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	245,427	155,242	400,669
Տարվա արդյունք	-	153,569	153,569
Հատկացումներ պահուստին	85,242	(85,242)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	330,669	223,569	554,238

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	153,569	85,242
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	70,464	18,277
Ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	-	320
Ֆինանսական եկամուտ	(11,307)	(4,647)
Ֆինանսական ծախս	23,935	-
Շահութահարկի գծով ծախս	2,261	929
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(20)	3
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	238,902	100,124
Դեբիտորական պարտքերի և կանխավճարների փոփոխություն	452	209
Պաշարների փոփոխություն	1,712	(5,563)
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	3,241	19,513
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	244,307	114,283
Վճարված շահութահարկ	(628)	(437)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	243,679	113,846
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(30,617)	(20,224)
Կարճաժամկետ պետական պարտատոմսերի ձեռք բերում	(392,370)	(132,535)
Կարճաժամկետ պետական պարտատոմսերի մարումից մուտքեր	316,884	192,933
Ստացված տոկոսային եկամուտ	10,616	4,647
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(95,487)	44,821

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալական վճարներ	(65,216)	-
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(65,216)	-
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	82,976	158,667
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	20	(1)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	388,111	229,445
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	471,107	388,111

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 19.06.2020 16:23